«ՄԿԾ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

«ՀՖԿՍՊԻ» հիմնադրամ
Որակի ապահովման բաժին

«ՄԿԾ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՖԿՍՊԻ-ն առաջնային կարևորություն է տալիս կրթության որակի ապահովման գործընթացներում բուհի ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությանը[1]:

2019-2020 ուսումնական տարում Որակի ապահովման բաժնի կողմից մշտադիտարկվել ու գնահատվել են բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերը: Մշտադիտարկումների արդյունքների, կրթական ծրագրերի ուժեղ և թույլ կողմերի ուսումնասիրությունների հիման վրա ուրվագծվել են կրթական ծրագրերի բարելավման ուղիները:

Բուհում մասնագիտական կրթական ծրագրերի վերանայումները դարձել են առօրյա խնդիր, և այս համատեքստում կարևորվում է ՄԿԾ–ի որակի ապահովման կառավարման և որակի շարունակական բարելավման մշակույթի ձևավորումը բուհում, կրթական ծրագրերի իրականացնողների կարողությունների բարելավումը:

Ընդգծենք, որ բուհը վերջին տարում ակտիվացրել է համագործակցությունը մասնագիտության կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի (ՈԱԱԿ) հետ՝ պարբերաբար մասնակցելով կենտրոնի կողմից անցկացվող կլոր-սեղան քննարկումներին, փորձագետների պատրաստման և վերապատրաստման դասընթացներին:

ՄԿԾ-ի որակի ապահովման գործիքակազմի և մեխանիզմների խորքային ուսումնասիրման նպատակով ՈԱԲ–ի նախաձեռնությամբ և ՈԱԱԿ-ի հետ համատեղ 2020 թ-ի օգոստոսի 27-ից սեպտեմբերի 4-ը իրականացվեց վերապատրաստման առցանց դասընթաց՝ «ՄԿԾ որակի ապահովման մեխանիզմներ» թեմայով: ՈԱ բաժնի կողմից ձևավորվեց 11 անձից բաղկացած վերապատրաստվողների խումբ, որի կազմում էին՝ ՈԱ բաժնի ղեկավարը, ֆակուլտետների դեկաններ, ամբիոնի վարիչներ, դասախոսներ և միջազգային համագործակցության բաժնի ղեկավարը:

Վերապատրաստման նպատակն էր նաև աջակցել հավատարմագրման ներկայացված ԿԾ–ի համապատասխան չափանիշ/չափորոշիչների ինքնավերլուծության իրականացմանը: Վերապատրաստումները անցկացվեցին գործնական ձևաչափով՝ հիմնականում հղում տալով բուհում իրականացվող առանձին գործընթացներին և մասնակիցներին քայլ առ քայլ ցույց տալով ՄԿԾ–ի որակի ապահովման և գործիքների ներդրման եղանակներն ու մոդելները:

---

[1] Հարցումներ դասախոսական կազմի և ուսանողության հետ, կրթական ծրագրերի արտաքին գնահատումների արդյունքների վերլուծություններ, պրակտիկաների և ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվությունների ընդհանրացված վերլուծություններ:

Քառօրյա դասընթացին մանրամասն քննարկվեցին դասավանդման և ուսումնառության կազմակերպման բաղադրիչները՝ դասավանդման մեթոդներ, գնահատում, բովանդակության արդիականացում, ուսանողների ներգրավում, խմբային աշխատանքի կիրառում, հետազոտական մեթոդների կիրառում:

Դասընթացի ծրագրում ներառված էին հետևյալ թեմաները՝

- ՄԿԾ նպատակներն ու խնդիրները բուհի ռազմավարության համատեքստում,
- ՄԿԾ ակնկալվող ելքային արդյունքների մշակում և դասընթացների վերջնարդյունքահեն քարտեզագրում,
- ուսանողի առաջընթացի պլանավորում,
- ուսանողի ինքնուրույն աշխատանք և կրեդիտների հաշվարկման մեխանիզմներ,
- դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության մեխանիզմներ,
- ուսանողի գնահատում և համարժեք ռեսուրսների ապահովում,
- հետազոտահեն կրթություն,
- որակի ապահովման մեխանիզմներ. դասախոսի մակարդակ, ՄԿԾ մակարդակ, բուհի մակարդակ:

Վերապատրաստման ավարտին ՈԱԲ-ի կողմից անցկացվեց հարցում, որի նպատակն էր պարզել՝ որքանով են մասնակիցները բավարարված մատուցված նյութի բովանդակությունից, որքանով այն ծառայեց նախանշված նպատակին:

Դաընթացին վերապատրաստվողները ապահովել էին 95% մասնակցություն, իսկ հարցմանը մասնակցել են նրանց 90.9%-ը:

Այսպիսով, իրականացված վերապատրաստման արդյունավետության գնահատումը ցույց է տալիս, որ մասնակիցների ավելի քան 90%-ը բավարարված է անցկացված վերապատրաստումից: Նրանցից 60%-ը նշել է, որ իր ակնկալիքներն արդարացել են, 30%-ը բավարար գնահատական տվել, իսկ 10%-ի ակնկալիքները չեն արդարացվել:

Մասնակիցների 90%-ը նշել է, որ դասընթացի մատուցման մեթոդները արդյունավետ էին և ներկայացված նյութը կիրառելի կլինի սեփական գործունեության համատեքստում, 10%-ը բացասական է պատասխանել այս հարցին: Հարցվածների 60%-ի կարծիքով ինքնավերլուծության իրականացման համար ներկայացված նյութն ու հավատարմագրման չափանիշ/չափորոշիչների մեկնաբանությունը մատչելի էին և արդյունավետ, 30%-ը կատարված աշխատանքը բավարար է գնահատել այս տեսանկյունից, իսկ 10%-ը տվել է բացասական պատասխան:

Մասնակիցների 60%-ին գոհացրել է դասընթացի անցկացման ժամանակահատվածը, իսկ 40%-ը նշել է, որ այն իրատեսական չէր:

Վերապատրաստումից հետո դասընթացի արդյունավետության գնահատումը

Գնահատման միավորներ	1	2	3	4	5
	Պատասխանների հաճախականությունը				
Վերապատրաստումը արդարացրեց Ձեր ակնկալիքները		1			6
Մատուցման մեթոդները արդյունավետ էին				1	9
Հավատարմագրման չափանիշ/չափորոշիչների մեկնաբանությունը մատչելի էր և օգտակար			1	2	6
Ներկայացված նյութը արդյունավետ էր ինքնավերլուծության իրականացման համար			1	3	6
Ներկայացված նյութի բովանդակությունը կիրառելի կլինի Ձեր գործունեության մեջ		1			9
Դասընթացի անցկացման ժամանակահատվածը իրատեսական էր				6	4

Վերապատրաստվողները հիմնականում նշել են վերապատրաստման հետևյալ ուժեղ և թույլ կողմերը

Վերապատրաստման ուժեղ կողմերը	Վերապատրաստման թույլ կողմերը
➢ Վերապատրաստող թիմի պրոֆեսիոնալիզմը: ➢ Կոմպետենտությունը: ➢ Քննադատական մոտեցման ապահովումը: ➢ Վերապատրաստման ամբողջական և առարկայական լինելը՝ ուղղված կոնկրետ խնդիրների լուծմանը: ➢ Ըստ մասնագիտության օգտակար և կիրառելի լրացուցիչ նյութերի տրամադրումը: ➢ Մատուցված նյութի մատչելիությունը: ➢ Երկխոսության և բանավեճի, հարց ու պատասխանի, կարծիքների փոխանակման հնարավորության ընձեռումը: ➢ Վերապատրաստում ընթացքում տրված խորհրդատվության և երաշխավորությունների կիրառական նշնակությունը : ➢ Նյութի կոնկրետ, պրակտիկ օրինակներով ներկայացումը: ➢ Այլ երկրի փորձի ներկայացումը:	➢ Հեռավար անցկացում: ➢ Ժամանակահատվածի սղություն: ➢ Ոչ բոլոր մասնակիցների ընդգրկվածությունը բանավեճերին և քննարկումներին: ➢ Դասընթացի գործնական կողմի պակասը (ցանկալի կլիներ մեր կողմից լրացված առաջադրանքները մի փոքր քննարկվեին): ➢ Խմբային աշխատանքի պակասը և դասի տևողությունը (3 ժամ): ➢ Վերապատրաստումների ընտրված ժամանակահատվածը (այն համընկնում էր ուսումնական գործընթացի սկզբի հետ, ինչը ստեղծում էր մի շարք խնդիրներ):

Ստորև ընդհանրացված ձևով ներկայացված են վերապատրաստման արդյունքում վերապատրաստվողների ձեռքբերած կարևոր գիտելիքները

- Հստակեցվել է վերջնարդյունքների ձևակերպման պահանջը, առաջադրանքների կապը վերջնարդյունքների և գնահատման մեթոդների հետ, այդ թվում նաև ՄԿԾ-ի կազմման և վերահսկման ռազմավարությունը:
- Վերջնարդյունքների համար «լավ» բայերի կիրառման կարևորությունը, դրանց չափելի և գնահատելի լինելը:
- Վերջնարդյունքների համար կոնկրետ հանձնարարությունների և առաջադրանքների մշակման և ձևակերպման առանձնահատկությունները:
- ՄԿԾ-ում դասավանդող դասախոսների փոխգործունեության և թիմային աշխատանքի կարևորությունը:
- Վերապատրաստմանը տեղի ունեցած քննարկումները օգնեցին աշխատանքային խմբերում հստակեցնել և առավել լավ պատկերացնել կրթական ծրագրերի վերանայումների և բարելավումների համար անհրաժեշտ քայլերն ու գործողությունները:
- Դասընթացը նպաստեց կրթական ծրագրերի որակի ապահովման այն առանցքային չափանիշների և ուղենիշների ամրապնդմանը, որոնք ներկայումս ներդրված են բուհի կրթական ծրագրերի վերանայման գործընթացներում:

Վերապատրաստումներն ավելի արդյունավետ դարձնելու վերաբերյալ վերապատրաստվողները ներկայացրել են հիմնականում հետևյալ առաջարկությունները

- Ցանկալի է նմանատիպ դասընթացները կազմակերպվեն հաճախակի՝ մտքերի փոխանակման և նոր տեղեկության տրամադրման և յուրացման համար:
- Հաջորդ դասընթացը անցկացնել իրական պայմաններում՝ աշխատաժողովների ձևով, քանի որ օնլայն տարբերակը անհարմարություններ էր ստեղծվում:
- Լավ կլիներ տրամադրվեին ավելի շատ նյութեր քննարկվող թեմաների վերաբերյալ:
- Գերադասելի կլիներ հաջորդ հանդիպումներին անդրադառնալ առաջադրանքների գնահատման չափանիշներին՝ դրանց օբյեկտիվության ապահովման նպատակով:

Ի մի բերելով դասընթացի ընթացքում մասնակիցների ձեռքբերած գիտելիքները, ակնհայտ է դառնում, որ այն, ըստ էության, կարևոր էր և օգտակար ՄԿԾ–ի պատասխանատուների և աշխատանքային խմբերի անդամների համար, որպեսզի առավել լավ պատկերացնեն կրթական ծրագրերի վերանայման և բարելավման համար անհրաժեշտ քայլերն ու գործողությունները: Դասընթացը օգտակար էր նաև ՄԿԾ-ի կազմման և վերանայման ռազմավարության մշակման, առաջադրանքների կապը վերջնարդյունքների և գնահատման մեթոդների հետ փոխկապակցման տեսանկյունից: Վերապատրաստվողների դիտարկումներից պարզ է դառնում, որ այդ պահանջը արդիական էր և նկատելի:

Դասընթացի մասնակիցների առաջարկն էր՝ ավելի մանրամասն անդրադառնալ առաջադրանքների գնահատման չափանիշ/չափորոշիչներին, դրանց օբյեկտիվության ապահովման նպատակով: Նաև նշել են, որ ցանկալի է նախատեսվող հաջորդ դասընթացը անցկացնել իրական պայմաններում:

Այսպիսով՝ վերապատրաստումների գնահատման քանակական և որակական տվյալների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ՈԱԱԿ-ի կողմից անցկացված վերապատրաստումը ծառայել է իր նպատակին և 90%-ը մասնակիցները ցանկություն են հայտնել մասնակցելու նմանօրինակ վերապատրաստումներին: